19.04.2021
347-40

ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Արսեն Թորոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թորոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Տրամադրեք խնդրում ենք Ձեր գերատեսչության աշխատակազմի տնօրինության տակ գտնվող այն փաստաթղթերի ցանկը, որոնք գաղտնազերծվել են 2020 թվականի ընթացքում:
2. Տրամադրեք պաշտոնական կայքի այն էջի հղումը, որտեղ հրապարակվել են գաղտնազերծված փաստաթղթերը կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկությունները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am